

շումն ամենայն հաւատացելոց լսողաց յազգս յաւիտենից: 15 Եւ ընկալեալ ի յախորժալուր ի տուչէն զգիւտ մաղթանաւք խնդրոյն իւրոյ՝ պատմել անդադար ցնծալից սրտիւ ամենայն ուղղափառ ժողովրդոց յամենայն տեղիս, ի զարմացումն եւ ի փառս անուանն Քրիստոսի:

**ԾԵ.** Իսկ Վեհդէնշապիոյ ի սկզբանն ոչ համարէր արժանի պատմել Խուժկին զսուրբ քահանայիցն, զոր ինչ գործելոց էր ընդ Նոսա, այլ ասէր, թէ «ի Վրկան տանիմք եւ անտի արծակեմք»: 2 Եւ երթային այն աւր ի գեաւղ մի, որում անուն էր Ռեւան, հեռի ի Նիւշապիոյ որպէս հրասախաւք վեցիւք եւ թէ աւելի եւս, ըստ չափոյ համարուց Պարսկացն, եւ դադարէին անդ մինչեւ ցառաւաւտուն պահն<sup>1</sup>: 3 Եւ յառաւաւտեան պահուն յարուցեալ փութով զաղտ, ոչինչ զգացուցեալ<sup>2</sup> ումեք ի գեղջէն, այլ<sup>3</sup> եւ ոչ ամենեցունց զորս ընդ ինքեանս, բայց միայն երանելի Խուժկան եւ անաւրէն դահճաւքն, որովք սպանանելոց էին զսուրբսն ըստ հրամանի թագաւորին՝ գնային<sup>4</sup> ի գեղջէն լռելեայն: 4 Եւ առեալ զսուրբսն դահճացն՝ գնացին զբովանդակ մնացեալ մասն ի գիշերոյն<sup>5</sup> ընդ անկոխ անապատն, հեռի ի գեղջէն որպէս պարսիկ հրասախաւ միով եւ թէ աւելագոյն. եւ ընդ ծագել առաւաւտուն հասանէին ի տեղի մի քարուտ, յառապարածոր<sup>6</sup> աւազուտ, ի տեղի՝ յոր ոչ հասանէր<sup>7</sup> արաւտական եւ ոչ բնաւ անցանէր ընդ Նա ուղեւոր, վասն ոչ գտանելոյ<sup>8</sup> երբէք ի Նմա ճանապարհ:

5 Եւ արկեալ աթոռս երեցունց իշխանացն՝ Նստէին ամբարապետն Վեհդէնշապուհ եւ Ջնիկան մայպետն արթունի եւ Մովան անդերձապետն: 6 Իսկ երանելոյ Խուժկին համբարծեալ առ Արարիչն ամենայնի զուշն:

7 Եւ կացուցեալ զսուրբ Նահատական յատենի՝ ասէ ցնոսա Վեհդէնշապուհ. «Բազում եւ անհամար չարիս գործեալ է ձեր, եւ բազում Արեացն կոտորածի պարտաւոր էք. զի թէ լոյ միայն երկուց եւ կամ երից անձանց մահու պատճառ էիք՝ սակայն մեծ էր, եւ չէիք արժանի կելոյ, թող թէ այնպիսւոյ աշխարհի մեծի, որպէս Յայթն են, եւ այնչափ բազում արեանց որ անդ հեղան. եւ ամենայնի այնմ դուք եք պարտաւորք, եւ ձեր առնելով եւ խրատու գործեցաւ ամենայն գործն այն: 8 Եւ ի վերայ այդչափ ձերոյ յանցանաց եւ մահապարտութեան՝ արքայից արքայ առ ձեզ կարի բարերարութիւն արար,

1 SS. չիք եւ յառաւաւտեան պահուն

2 Ձ. զսգացուցեալ

3 SS. չիք այլ

4 SS. գնացին

5 Ձ. ի գիշերոյն

6 SS. առապարածոր

7 Ձ. որ ոչ հասանէր

8 SS. ոչ գիտելոյ. Ձ. ոչ գնաւելոյ, յետոյ ուղղած այսպէս